

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

04 սեպտեմբերի 2018թ.

Ք.Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2018 թվականի սեպտեմբերի 4-ին ժ.12⁰⁰-ին կայացած

«Տավուշի մարզխորհրդի նիստի

1. Մարզի 2017-2018 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները:

Ձեկուցող՝ Մ Ղազումյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ

2. Մարզի համայնքների 2018թ. ութ ամիսների սեփական եկամուտների կատարողականների մասին

Ձեկուցող՝ Ա. Բարյումյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանս. և սոց.տնտ. վարչ. ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

3. Մարզի համայնքներում 2018թ. առաջին կիսամյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

Ձեկուցող՝ Ա. Մարդանյան - Աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՍՍԳՀ բաժնի վարիչ

4. 2018թ. ամառային զորակոչի արդյունքների ամփոփում և 2018թ. ձմեռային զորակոչի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում

Ձեկուցող՝ Գ. Մատինյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ

**5. Մարզում ՏԻՄ-երի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման մասին:
5.1 Սուրվենցիոն ծրագրերի ընթացքի մասին**

Ձեկուցող՝ Գ. Հարությունյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

6. Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները կանխելու և իրավախախտումներ կատարելու համար հաշվառված անչափահասների շրջանում մարզի ոստիկանությանը կից անչափահասների գործերով խմբերի հետ տարվող համատեղ աշխատանքների մասին

Ձեկուցող՝ Հ. Քոչարյան ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ

7. Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, վերանորոգման աշխատանքների ընթացքի մասին

Ձեկուցող՝ Ա. Սարգսյան ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշին. վարչ. տրանսպորտի բաժնի վարիչ

8. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության ու սպասարկման պետպատվերի կատարման կիսամյակային տվյալների ամփոփում

Ձեկուցող՝ Ռ. Տիգրանյան ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

9. Մարզում լուծում պահանջվող աշխատանքների ընթացքի մասին

Ձեկուցող՝ Մ. Մելքումյան ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշին. վարչության պետի ժ/պ

10. Այլ հարցեր

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՈՂ

«Տավուշի մարզխորհրդի նիստի

Նիստը վարում էր Տավուշի մարզպետ Վ.Ղալումյանը:

Ներկա էին մարզպետի տեղակալները, խորհրդականը, օգնականը, գլխավոր քարտուղարը, վարչությունների պետեր, բաժինների վարիչներ և պատասխանատու մասնագետներ:

Մարզխորհրդի 24 անդամներից բոլորը ներկա էին:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Վ.Ղալումյանը:

1.Մարզի 2017-2018 ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա հիմնախնդիրները

Զեկուցող՝ Մ Ղազումյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժ/պ

Մ.Ղազումյանը ողջունեց և շնորհավորեց բոլոր ուսումնական հաստատություններին՝ նոր ուսումնական տարվա կապակցությամբ:

Զեկուցողը ներկայացրեց, որ յուրաքանչյուր տարի ատեստավորվում է ուսուցիչների 1/5-ը: Ատեստավորման գործընթացին նախորդում է ուսուցիչների վերապատրաստումը, որը հիմնականում իրականացվում է Կրթության սեզգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում: 2017-2018 ուսումնական տարում նրեմբեր-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում ատեստավորվել է 327 ուսուցիչ: 2017-2018 ուստարում մարզից տասներկու ուսուցչի շնորհվել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ: Կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում ուսուցիչների հերթական վերապատրաստումն իրականացվել է երկու փուլով: 1-ին փուլն իրականացվել է 2018թ. մայիս-հունիս ամիսներին, որին մասնակցել է 176 ուսուցիչ, ձևավորվել է 11 խումբ: 2-րդ խմբի վերապատրաստումն սկսվելու է 2018թ.

սեպտեմբերին, որին կմասնակցի 169 ուսուցիչ՝ 12 խմբով: Վերապատրաստված ուսուցիչների ատեստավորումը նախատեսվում է անցկացնել 2018-2019 ուստարում:

Ձեկուցողը ներկայացրեց մարզում իրականացվող նախադպրոցական միկրոծրագրերը, նշելով, որ արդեն 7-րդ տարին է, որ «Տավուշի մարզն ընդգրկված է «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագրում: 2017-2018 ուստարում մարզի 16 դպրոցում գործել է նախակրթարան: Քանի որ նախադպրոցական ուսումնական հաստատությունները դիտարկվում են որպես կրթության կարևորագույն օղակ, աշխատանքներ են տարվում մանկապարտեզներ և նախակրթարաններ հաճախող երեխաների թվի ավելացման ուղղությամբ:

Մ.Ղազումյանն անդրադարձավ նաև օլիմպիադաներին և նրանց արդյունքներին, նշելով, որ 2018թ. փետրվարի 24-ից մինչև մարտի 16-ը անցկացվել է դպրոցականների օլիմպիադաների երրորդ (մարզային) փուլը: Մրցութային առաջադրանքները կազմել են հանրապետական առարկայական հանձնաժողովները: Մարզային փուլին մասնակցել է 272 աշակերտ, որից 69-ը մասնակցել է դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին: Մարզպետի կողմից հաստատված հանրապետական փուլի մասնակիցների հայտերը՝ բացառությամբ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և ինֆորմատիկայի (վերջիններս անցկացվել են այլ ընթացակարգով), ներկայացվել են «ԿԳՆ: Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցներից 10-ն արժանացել է դիպլոմի, 4-ը՝ գովասանագրի: Դիպլոմների և գովասանագիրների արժանացած աշակերտները Դիլիջանի ավագ, Դիլիջանի թիվ 2 հիմնական, Դիլիջանի կենտրոնական, Նոյեմբերյանի ավագ, Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական, Բերդավանի միջնակարգ, Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոցների աշակերտներն են: Արժվաբերդի միջնակարգ դպրոցի թիմը ՆՁՊ-ի օլիմպիադայում զբաղեցրել է 2-րդ տեղը:

Խոսվեց նաև իրականացված այլ միջոցառումների մասին. «Կառավարության ծրագրում ներառված է եղել «Մշակութային կազմակերպություն-դպրոց» արձեմնենտային համակարգի ներդրման պիլոտային ծրագիրը, որն իրականացվել է Երևանում՝ սահմանամերձ և սահմանապահ համայնքների հիմնական դպրոցների միջին դասարաններում սովորող աշակերտների (10-14 տարեկան) համար. երեք միջոցառում՝ մեկ ներկայացում, մեկ համերգային ծրագիր և մեկ թանգարանային այցելություն: Օրակա հիկի և գիշերավարձի ծախսերը Երևան քաղաքում ֆինանսավորվել են ծրագրի շրջանակներում, իսկ տրանսպորտային ծախսերը մարզից Երևան և հակառակ ուղղությամբ հոգացել է մարզպետարանը:

Մ.Նազումյանը ներկայացրեց նաև ներառական կրթության խնդիրները, ձեռնարկված միջոցառումները, նշելով, որ ներառական կրթության գաղափարները «Տավուշի մարզում սկսվել է քննարկվել դեռևս 1999 թվականից, երբ մարզում գործում էին «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կենտրոնները (1999թ-ից Դիլիջանում, 2003թ-ից Իջևանում, 2004թ-ից Բերդում, 2005թ-ից Նոյեմբերյանում): «Կառավարության 27.01.2011թ. թիվ 46-Ն որոշման համաձայն 2011թ-ից մարզի բոլոր դպրոցներն անցան ներառական կրթության համակարգի:

Ներառական կրթությունը Տավուշի մարզի դպրոցներում դարձել է իրականություն և արդեն տվել է իր արդյունքները, ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ համայնքում՝ հաղթահարելով առկա կարծրատիպերը՝ մարդասիրական արժեքների տարածման և ամրապնդման շնորհիվ:

Զեկուցողը ներկայացրեց ևս մի քանի կարևոր հարցեր և ամփոփելով իր զեկույցը կոչ արեց համայնքների ղեկավարներին և դպրոցների տնօրեններին համագործակցված աշխատել միասին:

2.Մարզի համայնքների 2018թ. ութ ամիսների սեփական եկամուտների կատարողականների մասին

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ»

Զեկուցողը ներկայացրեց, որ 2018 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2233.4 մլն. դրամ, որը կազմում է հաշվետու ժամանակաշրջանի նախատեսվածի 97.1 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 606.5 մլն. դրամ կամ կատարվել է 90.2 %-ով: 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները ավել են հավաքագրվել 102.0 մլն. դրամով:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ սեպտեմբերի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ – ութ ամսվա նախատեսված 117.7 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 107.0 մլն. դրամ կամ կատարվել է 91.0 % - ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է հավաքագրվել 4.5 մլն. դրամով: Թերհավաքագրման պատճառը կայանում է նրանում, որ 2017 թվականի հողի հարկի փոխհատուցման 62.4 մլն. դրամը 2017 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ամբողջությամբ փոխհատուցվել է, իսկ ընթացիկ տարվա փոխհատուցման գումարները փոխհատուցվել են 50.0 %-ով կամ 31.2 մլն. դրամ:

Հողի հարկի մասով ցածր կատարողական ունեցող համայնքներն են՝ Գետնիովիտ 43.8 %, Կողբ 44.7 %, Լուսահովիտ 47.4%, Խաչթառակ 49.2%, Իջևան 49.6%, Աչաջուր

60.4%: Բարձր կատարողական ունեն Ակնաղբյուր 118.7%, Այրում 106.6%, Դիլիջան 106.2% համայնքները:

- գույքահարկ - ութ ամսվա նախատեսված 229.1 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 209.0 մլն. դրամ կամ կատարվել է 91.3 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 19.3 մլն. դրամով:

Գույքահարկի մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Խաշթառակ 32.0%, Վազաշեն 36.7%, Աչաջուր 59.9%, Գետահովիտ 60.2%, Այգեհովիտ 61.3%, Աճարկուտ 68.8 %, Լուսաձոր 71.2%: Բարձր կատարողական ունեն Ն. Ծաղկավան 142.1%, Ակնաղբյուր 134.1%, Դիլիջան 109% համայնքները:

- տեղական տուրքեր - ութ ամսվա նախատեսված 31.9 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 28.2 մլն. դրամ կամ կատարվել է 88.2 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է հավաքագրվել 4.9 մլն. դրամով:

Տեղական տուրքերի մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Ենոքավան 28.6 %, Խաշթառակ 56.2 %, Կողբ 71.1 %, իսկ Լուսաձոր, Կիրանց, Վազաշեն համայնքներն ընդհանրապես գումարներ չեն հավաքագրել: Այգեհովիտ համայնքը սեպտեմբերի 3-ի դրությամբ դրությամբ տարեկան նախատեսված 100.0 հազ. դրամն ամբողջությամբ հավաքագրել է: Բարձր կատարողական ունեն Սարիգյուղ 144.8%, Բերդ 112.2%, Այրում 98.8% համայնքները:

- գույքի վարձակալությունից եկամուտներ - ութ ամսվա նախատեսված 66.4 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 60.3 մլն. դրամ կամ կատարվել է 90.8 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 13.0 մլն. դրամով:

Գույքի վարձակալությունից եկամուտների մասով ցածր կատարողական ունեցող համայնքներն են՝ Խաշթառակ 39.0%, Աչաջուր 44.5%, Ենոքավան 56.4%, Իջևան 57.9%, Ն. Ծաղկավան 68.0%, Դիտավան 71.1%, Կողբ 73.8%, Սևքար 75.3%: Բարձր կատարողական ունեն Նոյեմբերյան, Գանձաքար, Լուսաձոր, Գետահովիտ, Ակնաղբյուր, Բերքաբեր համայնքները:

- տեղական վճարներ - ութ ամսվա նախատեսված 203.4 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 170.5 մլն. դրամ կամ կատարվել է 83.8 %-ով, որը 2017 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելի է 69.3 մլն. դրամով:

Տեղական վճարների մասով ցածր կատարողական ունեն հետևյալ համայնքները՝ Ենոքավան 22.2%, Դիտավան 46.7%, Խաշթառակ 58.1%, Սևքար 59.5%, Այրում 72.4%, Նոյեմբերյան 72.9%, Իջևան 75.0%: Բարձր կատարողական ունեն Լուսաձոր 106.9%, Գանձաքար 105.6, Բերդ 104.3% համայնքները:

«Տավուշի մարզպետի համապատասխան գրություններով ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվել էր կտրուկ միջոցներ ձեռնարկել հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, սակայն իրավիճակը ցածր կատարողականներ ունեցող համայնքներում առ այժմ մնում է նույնը:

Ա.Բաբլումյանը նշեց, որ մինչև տարեվերջ մնացել է 4 ամիս և համայնքների ղեկավարներին կրկին անգամ առաջարկվում է ամենօրյա հետևողական աշխատանքներ

տանել և տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը հասցնել 100 տոկոսի:

« Տավուշի մարզպետի համապատասխան որոշումներով մարտայան գործողությունների հետևանքով չմշակվող հողատարածքների հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան հաշվարկների փոխհատուցման նպատակով 2018 թվականին նախատեսվել է հատկացնել պետական աջակցություն 52.0 մլն դրամ՝ հողի հարկի գծով և 220.6 հազար դրամ՝ գույքահարկի գծով: Նշված որոշումներով սահմանված համամասնությունների համաձայն 1-ին կիսամյակի համար նախատեսված հողի հարկի և գույքահարկի գումարները ֆինանսավորվել են: Համայնքների հետ կնքված պայմանագրերի 2.1 կետի պահանջի համաձայն համայնքը պարտավոր է հատկացված գումարը գանձապետական համապատասխան հաշիվ մուտքագրելուց հետո մեկամսյա ժամկետում մուտքագրել հողի հարկի և գույքահարկի հաշվարկման տեղեկատվական բազա ու հարկատուներին տրամադրել անդորրագրեր: Գումարները մուտքագրելուց հետո համայնքը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել մարզպետարան:

Ս/թ սեպտեմբերի 1-ի դրությամբ 1-ին չափաբաժինը տեղեկատվական բազա մուտքագրելու վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրել են Այգեհովիտ, Բերքաբեր, Ն. Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Վազաշեն համայնքները և նշված համայնքների 2-րդ չափաբաժնի ֆինանսավորման հայտը ներկայացվել է « ֆինանսների նախարարություն:

Բերդ, Նոյեմբերյան և Կողբ համայնքների ղեկավարներին առաջարկվում է սեղմ ժամկետներում ավարտին հասցնել հատկացված աջակցության 1-ին չափաբաժնի գումարների մուտքագրումը տեղեկատվական բազա և հաշվետվություն ներկայացնել մարզպետարան՝ 2-րդ չափաբաժինը ֆինանսավորելու համար:

2018 թ. սեպտեմբերի 4-ի դրությամբ օգոստոս ամսվա աշխատավարձերի վճարումներն ընթացքի մեջ են: Նախորդ տարիներից առաջացած պարտքեր ունի Աջաջուր համայնքը՝ 3.7 մլն. դրամ, որից վճարել է 2.6 մլն. դրամ և 01.09.2018 թ. դրությամբ պարտք է մնացել 1.1 մլն. դրամ:

Առաջարկվեց.

Նոյեմբերյան, Կողբ և Բերդ համայնքների ղեկավարներին.

Պետական աջակցություն ստացած համայնքները հողի հարկի ստացված գումարները մուտքագրեն տեղեկատվական բազա:

Ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին.

Միջոցներ ձեռնարկել՝ մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

3. Մարզի համայնքներում 2018թ. առաջին կիսամյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին

Ձեկուցող՝ Ա. Մարդանյան - Աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏՄԳ բաժնի վարիչ

Ա.Մարդանյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 95.1 և 95.2 հոդվածների պահանջների կատարման կարգը և ղեկավարվելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 19-ի թիվ 15-Ա „Իրավական և մասնագիտական հսկողության 2017թ. աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին„ հրամանը, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզպետի 2018թ. փետրվարի 8-ի թիվ 22-Ա և ապրիլի 4-ի թիվ 39-Ա որոշումները, ս/թ 1-ին կիսամյակում, ըստ եռամսյակների սահմանված գրաֆիկով իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն մարզի 4՝ Աճարկուտ, Կիրանց, Այգեհովիտ և Վազաշեն համայնքների ղեկավարների ու ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ, որոնց վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ: Հսկողության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին մարզպետարան-համայնքապետարանների աշխատակազմեր համագործակցությունը դրական արդյունք է տվել: Մասնավորապես, բարձրացել է համայնքային ծառայողների, հատկապես աշխատակազմերի քարտուղարների իրավական գրագիտությունն ու պատասխանատվությունը: Իրականացված հսկողության արդյունքում, ըստ ոլորտների բացահայտված թերությունների մի մասը տեղում վերացվել են:

4. 2018թ. ամառային զորակոչի արդյունքների ամփոփում և 2018թ. ձմեռային զորակոչի նախապատրաստման աշխատանքների կազմակերպում

Ձեկուցող՝ Գ. Մատինյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ

Ձեկուցողը ներկայացրեց, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մայիսի 3-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 536-Ն որոշման պահանջներով և ՀՀ Տավուշի մարզպետի 2018թ. մայիսի 14-ի «Տավուշի մարզում 2018թ. ամառային զորակոչ կազմակերպելու մասին» թիվ 57-Ա որոշումով՝

- հաստատվել է մարզի տարածքային զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովների կազմերը,
- հանձնարարվել է զինկոմներին՝ 2018թ. ամառային զորակոչը անցկացնել սահմանված կարգով,

- հանձնարարվել է մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝ ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> << օրենքի պահանջներով, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ,
- առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ իրավասության սահմաններում ապահովել ամառային զորակոչի կազմակերպումը,
- հանձնարարականներ է տրվել և առաջարկվել կազմակերպությունների ղեկավարներին՝ ամառային զորակոչին սահմանված կարգով աջակցություն ցուցաբերելու:

2018 թվականի մայիս-օգոստոս ամիսներին մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերին քննարկվել են 2018 թվականի ամառային զորակոչի ընթացքի և խնդիրների մասին, <<Ես եմ>>, <<Պատիվ ունեմ>> ծրագրերի կատարման, տարկետման ներկայացված անձնական գործերի, ժամկետային զինծառայությունից խուսափող պատանիների վերաբերյալ հարցեր: Նիստերում նշվել է զորակոչի՝ որպես պետական կարևորագույն միջոցառման նշանակությունը: Իրադարձությունները փաստում են, որ մեր հանրապետության անվտանգության միջավայրը դեռևս մնում է փխրուն, հղի ցանկացած իրադարձություններով և զարգացումներով, ուստի այն կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները, որոնք առնչվում են նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դաստիարակման և ուսուցման խնդիրներին, պետք է այս հարցը դասեն ամենակարևորագույնների շարքում և ամենօրյա հետևողականություն ցուցաբերեն զորակոչին առնչվող միջոցառումները ժամանակին և սահմանված կարգով իրականացնելուն: Այստեղ կարևորվում է հատկապես համայնքների դերը:

Առաջարկվել է համայնքների ղեկավարներին կցագրման միջոցառումներն իրականացնել <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> և <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքներին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահի կողմից հաստատվել են տարածքային զինկոմիսարիատների ներկայացրած աշխատանքային պլանները՝

- ռազմական ուսումնական հաստատությունները դիմորդ-թեկնածուներով համալրելու,
- տեղամասին կցագրված նախազորակոչիկներին զինվորական ծառայության նախապատրաստելու հիմնական միջոցառումների,
- ուսումնական հաստատությունների ՆԶՊ ծրագրերով ավագ դասարանի տղաների հետ երկօրյա դաշտային պարապմունքների,

- ՆԶՊ ուսումնասիրող պատանիների հետ հայրենասիրական դաստիարակչական ընդհանուր միջոցառումների,
- ուսումնական հաստատությունների զինղեկների հետ եռօրյա մեթոդական հավաքների վերաբերյալ:

Վերջին տարիներին մարզի դպրոցներում բավական դրական տեղաշարժ է կատարվել ՆԶՊ դասարանների, փառքի սրահների ձևավորման, սպորտ հրապարակների, զենքի պահպանման սենյակների կահավորման, ամրացման, ռազմական խաղերի կազմակերպման, հայրենասիրական դաստիարակության և հայոց պատմության, ֆիզկուլտուրա առարկաների ուսումնական և քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական բազաների համալրման ուղղությամբ:

Բերդ, Նոյեմբերյան համայնքների ավագ, Բերդ համայնքի Մովսես և Չինարի բնակավայրերի միջնակարգ դպրոցներում և թիվ 21/127 զորամասում տեղադրվել են “Մենամարտ” վարժասարքեր, որոնցից համաձայն պլան-ժամանակացույցի կարող են օգտվել նաև Բերդ և Նոյեմբերյան համայնքների մնացած դպրոցները: Մարզի սահմանամերձ համայնքներում “Մենամարտ” վարժասարքեր տեղադրելու գործընթացը հարկավոր է շարունակել:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ զինապահեստներով և զենքով ապահովված են 59 դպրոցներ: Մարզպետի կողմից հանձնարարություն է տրվել 2018թ. վերջնականապես ավարտել բոլոր դպրոցներում ՆԶՊ ծրագրով անհրաժեշտ ուսումնական դասարանների և ուսումնական զենքի ապահովումը:

2018թ. հուլիս-օգոստոս ամիսներին մարզում իրականացվել է ամառային զորակոչ: Բոլոր զինկոմիսարիատներում մեկնարկը տրվել է հանդիսավոր միջոցառումներով՝ հրավիրվել են գեղարվեստական խմբեր, նորակոչիկներին բանակ ճանապարհելու բարեմաղթանքներով հանդես են եկել պատերազմի վետերաններ, ազատամարտիկներ, ծնողներ, զինկոմիսարիատի պատասխանատու աշխատակիցներ, մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Համայնքների ղեկավարները համայնքներում կազմակերպել են հանդիսավոր երեկոներ՝ մասնակից դարձնելով նախազորակոչային տարիքի պատանիների, պատերազմի վետերանների:

5. Մարզում ՏԻՄ-երի կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացման մասին:

5.1 Սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին

Ձեկուցող՝ Գ. Հարությունյան << Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

Ձեկուցողը ներկայացրեց, որ համաձայն <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի և << տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականի 2018թ. Առաջին կիսամյակում մարզի համայնքներում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվել է 855 ստուգումներ/ նախորդ տարվա 163 -ի դիմաց /որից՝ 664 առևտրի, 82 հանրային սննդի և 109 կենցաղային ծառայությունների օբյեկտներում: Արդյունքում արձանագրվել են 19 խախտումներ նախորդ տարվա 45-ի դիմաց և սահմանված կարգով նշանակվել 240 հազար դրամ տուգանք, նախորդ տարվա 230 հազար դրամի դիմաց: Տեղեկատվությունը ամփոփվել և սահմանված կարգով ներկայացվել է << տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Համաձայն << տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականի, շարունակվել է մարզի համայնքներում իրականացվել ուսումնասիրություններ առևտրի կազմակերպման կանոնների՝ մասնավորապես ապրանքների պահպանման, պիտակավորման, ապրանքային տեսքի պահպանման, տակդիրների և աղբարկղերի տեղադրման, կշռափաթեթավորման, սանիտարահիգիենիկ պայմանների, տեխնոլոգիական սարքավորումների, հաշվիչ դրամավրկղային մեքենաների, չափիչ և ստուգիչ սարքերի և ցուցանակների տեղադրման աշխատանքների և այլ գործառույթների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում տարվել են բացատրական աշխատանքներ: Ձեկուցողը նշեց նաև, որ ի կատարումն << տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականի համայնքներում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում վերահսկողության իրավասություններ ունեցող պատասխանատու մասնագետների ցանկը ճշտելու, մատուցվող ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը էլ ավելի բարձրացնելու նպատակով առաջիկայում շրջաբերականներ կուղարկվեն մարզի համայնքների ղեկավարներին:

6. Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները կանխելու և իրավախախտումներ կատարելու համար հաշվառված անչափահասների շրջանում մարզի ոստիկանությանը կից անչափահասների գործերով խմբերի հետ տարվող համատեղ աշխատանքների մասին

Ձեկուցող՝ Հ. Քոչարյան << Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ

Ձեկուցողը ներկայացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում << Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մարզի ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խմբերի ծառայողների հետ համատեղ իրականացրել է որոշակի աշխատանքներ՝ ուղղված անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և իրավախախտումների

կանխարգելմանը, դրանց ծնող պատճառների և պայմանների վերացմանը, ընտանեկան բնութայինների, երեխաների նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական բնության հիմնախնդիրների ուսումնասիրությանը և առկա խնդիրների լուծմանը, ինչպես նաև նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզի ոստիկանության տարածքային բաժիններում հանցագործությունների և իրավախախտումների համար պրոֆիլակտիկ հաշվառման մեջ են եղել 4 անչափահասներ, որից՝ Իջևան-1 /1 մարմնական վնասվածք/, Դիլիջան-2 /2 գողություն/ և Տավուշ-1 /1 գողություն/:

2018թ. ընթացքում արձանագրվել է հանցագործության երեք դեպք Դիլիջան-1 /1-գողություն/ և Նոյեմբերյան-2-ը /1-ը՝ գողություն, 1-ը՝ ծեծ/:

Համատեղ իրականացված պրոֆիլակտիկ-դաստիարակչական և անհատական աշխատանքների արդյունքում, 2018թ. ընթացքում հաշվառման մեջ գտնվողներից 3 անչափահասներ ուղղվելու և վերադաստիարակվելու պատճառով հանվել են հաշվառումից՝ Դիլիջան - 3: Մնացել է հաշվառման մեջ 4 անչափահաս՝ Իջևան-1 /տնից ինքնակամ հեռանալը/, Տավուշ -1 /մարմնական վնասվածք/, Նոյեմբերյան - 2 /1 գողություն, 1 ծեծ/:

ԸԿԵԻՊ բաժնի և ԱԳ և ԸԲԿ խմբերի ոստիկանության ծառայողների նախաձեռնությամբ դպրոցահասակ երեխաների շրջանում կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ՝ առողջ ապրելակերպի, իրավական մակարդակի բարձրացման, քաղաքացիական ակտիվության վերաբերյալ:

Մի շարք հանրակրթական դպրոցներում անց են կացվել «Ընտանեկան բնության հիմնախնդիրները և դրանց կանխարգելման վերաբերյալ հարցերը», «Անչափահասը և հանցագործությունը», «Անչափահասների շրջանում սեռական բնության դեմ պայքարի առավել արդյունավետ մեթոդները» թեմաներով զրույց-զեկուցումներ:

«ՎորլդՎիժն» ՄԲԿ Հայաստան ծրագրի հետ համագործակցությամբ և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի անմիջական օժանդակությամբ կազմակերպվել է 2017թ. դեկտեմբերին ԱԺ-ի կողմից ընդունված «Ընտանիքում բնությանկան խարգելման, ընտանիքում բնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի քննարկում, որին մասնակցել են մարզի ոստիկանության բոլոր բաժինների ԱԳ և ԸԲԿ խմբերի ոստիկանության ծառայողները, մարզպետարանի աշխատակազմի Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի սոցիալական աջակցության տարածքային գործակալության մասնագետները և շահագրգիռ բոլոր կառույցների ներկայացուցիչները:

Շարունակական աշխատանքների արդյունքում ուսումից չարամտորեն խուսափող 4 անչափահասներ վերադարձվել են դպրոց:

Իջևանի «ՍՕՍ» մանկական գյուղում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ ՀՀ Տավուշի մարզպետի հանձնարարությամբ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցները այցելություն են կատարել նշված հաստատություն: Կազմակերպության աշխատակիցների և երեխաների հետ տարված առանձին զրույցների, ինչպես նաև կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված կազմակերպության աշխատակցի կողմից բռնի գործողություններ է կատարվել հաստատության սաների նկատմամբ: Տեղում երեխաների հետ տարվել են մանկավարժահոգեբանական, վերականգնողական աշխատանքներ:

Դեպքի առնչությամբ հարուցված է քրեական գործ և ներկայումս կատարվում է նախաքննություն:

Հանցավորությանկան խարգելման, դրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ուղղությամբ ՀՀ Ոստիկանության պետի 07.11.2013թ. թիվ 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերին յուրաքանչյուր եռամսյակ շահագրգիռ նախարարությունների և հասարակական կազմակերպությունների

ներկայացուցիչների մասնակցությամբ կատարվում են քննարկումներ, ներկայացվում են առաջարկություններ և նշվում դրանց կատարման համար կոնկրետ ժամկետներ:

7. Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, վերանորոգման աշխատանքների ընթացքի մասին

Ձեկուցող՝ Ա. Սարգսյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի բաժնի վարիչ

Ա. Սարգսյանը ներկայացրեց, որ 2018թ. ՀՀ պետական բյուջեով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 566.627 մլն դրամ գումար և Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ՝ մարզային նշանակության ճանապարհների համար՝ 111.569 մլն. դրամ գումար:

2018թ. պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է Մ-16, Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 ավտոճանապարհի նախագծահե-տազտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքները՝ 36.2 մլն. դրամ պայմանագրային արժեքով, կատարող՝ <Ճաննախագիծ ինստիտուտ> ՍՊԸ:

2018թ. պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ իրականացվում է Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի Կիրանց-Ոսկեպար 8կմ, Սարիգյուղ-Աճարկուտ 4կմ, Ջուջևան-Նոյեմբերյան 6կմ հատվածների հիմնանորոգման աշխատանքները՝ 1 298.4 մլն. դրամ պայմանագրային արժեքով, կապալառու՝ <Վառմաշ> ՍՊԸ-ի հջևանի տեղամաս:

2018թ. Համաշխարհային բանկի <Կենսական նշանակության ճանապարհների բարելավման> ծրագրով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ իրականացվում է՝ <36-Մովսես-Չորաթան-Նարաշեն կմ0+000-կմ5+587 մարզային, <64 Բերդ-Արծվաբերդ-Չինարի կմ0+000-կմ4+540 և S-10-35 /Մ-6/ - Արճիս կմ0+000-կմ3+671 հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքները համապատասխանաբար՝ 736.592 մլն. դրամ, 350.618 մլն. դրամ պայմանագրային արժեքներով, կապալառու՝ <Տավուշի ՃՇՇ> ՓԲԸ և S-10-35 /Մ-6/ - Արճիս կմ0+000-կմ3+671 մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները՝ 430.0 մլն. դրամ պայմանագրային արժեքով, կապալառու՝ <ԱԲ պրոյեկտ> ՍՊԸ:

2018թ. <Հայաստան> համահայկական հիմնադրամի բարեգործական ծրագրով իրականացվում է՝ ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան համայնքի կենտրոն տանող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքները՝ 102.252 մլն. դրամ պայմանագրային արժեքով, կապալառու՝ <Ճամբարանի ՃՇՇ> ՓԲԸ:

Ընդհանուր առմամբ՝ 2018թ.-ի ունեցած տվյալների համաձայն, մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմում է 3 692,258 մլն դրամ /2017թ. ճանապարհաշինության բնագավառում կապիտալ ներդրումները կազմել է՝ 1 260,814 մլն դրամ/:

2019թ. ՀՀ պետական բյուջեի ծրագրերով նախատեսվում է իրականացնել Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ավտոճանապարհի 16.8 կմ թվով 5 ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքները՝ 1 422.31 մլն. դրամ արժեքով, Ոսկեպար-Բաղանիս կմ 0+000-կմ0+813 հատվածի կառուցման աշխատանքները՝ 397.0մլն. դրամ արժեքով, Հ-36 Մ-4-Իջևան-Նավուր-Բերդ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ7+500 փլուզված հատվածի վերականգնման աշխատանքները՝ 75.0մլն. դրամ արժեքով, Հ-61 Մ16 – Բերքաբեր 4.0 կմ երկարությամբ հանրապետական նշանակության /220.0 մլն դրամ նախնական գնահատման արժեքով/, S-10-37 Տավուշ-Ն.Կ.Աղբյուր 5.7 կմ երկարությամբ մարզային նշանակության /337.0 մլն դրամ նախնական գնահատման արժեքով/, Հ64 Բերդ-Արծվաբերդ-Չինարի 1.65 կմ երկարությամբ հանրապետական նշանակության /113.0 մլն դրամ նախնական գնահատման արժեքով/, Բերդավանի 2.1 կմ երկարությամբ ներհամայնքային /240.0 մլն դրամ նախնական գնահատման արժեքով/, Այգեպարի 2.0 կմ երկարությամբ ներհամայնքային /130.0 մլն դրամ նախնական գնահատման արժեքով/, Չորաթանի ձեռնոցի գործարան տանող 0.5 կմ երկարությամբ համայնքային նշանակության /37.4 մլն դրամ նախնական գնահատման արժեքով/ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները:

2019թ. Համաշխարհային բանկի <Կենսական նշանակության ճանապարհների բարելավման> ծրագրով S-10-24 Մ-4-Գետահովիտ 1.7 կմ երկարությամբ մարզային նշանակության /տակ է նախագծանախահաշվային փաստաթղթերը/ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

2019թ. Ասիական զարգացման բանկի Մ-6 Վանաձոր -Ալավերդի-Վրաստանի սահման ավտոճանապարհի վերականգնման ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրատվությամբ նախատեսված է իրականացնել մարզի Արճիս-Բագրատաշեն միջպետական ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքները:

8. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության ու սպասարկման պետպատվերի կատարման կիսամյակային տվյալների ամփոփում

Զեկուցող՝ Ռ. Տիգրանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ կառավարության 2018թ. ծրագրում շեշտադրում է արված առողջապահության որակի, հասանելիության, մատչելիության, հիվանդությունների կանխարգելման, մոր և մանկան, վերարտադրողական առողջության բարելավման քաղաքականության իրականացման վրա:

ՀՀ Տավուշի մարզում պետական պատվեր են իրականացնում 27 բուժհաստատություններ, որոնցից 3 բժշկական կենտրոնները /Իջևանի, Բերդի և Նոյեմբերյանի ԲԿ/ ՓԲԸ-ներ են, Պիլիջանի „Իռվինգ“, բժշկական կենտրոնը ՍՊԸ է, Աչաջրի, Արծվաբերդի և Այգեձորի ԱԿ ՊՈԱԿ-ներ են, 15-ը առողջության առաջնային պահպանման կենտրոններ ՊՈԱԿ-ներ են, 3-ը՝ ՀՈԱԿ-ներ են /Գանձաքար, Կողբ, Բերդավան/ և 1-ը ընտանեկան բժշկի գրասենյակ է, /,,Արևհատ և Անի,, ՍՊԸ/:

Մարզի բուժհաստատություններում աշխատում են 218 բժիշկներ, 520 միջին բուժանձնակազմ և 247 տեխնիկական աշխատողներ, մոտ 1000 աշխատակից:

Մահճակալային ֆոնդը կազմում է 240 մահճակալ, որից 76-ը Իջևանի ԲԿ-ում, 40-ը „Իր-Վինգ,, ՍՊԸ-ում, 60-ը Նոյեմբերյանի ԲԿ-ում, 30-ը Բերդի ԲԿ-ում, 20-ը Արծվաբերդի ԱԿ-ում, 10-ը Աչաջրի ԱԿ-ում, 4-ը Այգեձորի ԱԿ-ում: Տավուշի մարզպետարանի ենթակայության բուժփմնարկների պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության ու սպասարկման բյուջեն կազմում է 1239173,7 հազ. դրամ: Կիսամյակային բյուջեն կազմում է 619586,8 հազ. դրամ: 2018թ. 1-ին կիսամյակում բուժփմնարկների կողմից կատարվել է 711397.1 հազ. դրամի ծախս, պետական բյուջեից տրվել է ֆինանսավորում 635175,3 հազ.դրամ, որը կազմում է կիսամյակային բյուջեի 102,5 %: 1-ին կիսամյակում բուժփմնարկների ընդհանուր եկամուտները կազմել են 642738,9 հազ. դրամ: Վճարովի ծառայությունները կազմել են 115075,0 հազ. դրամ: Հաշվարկներում չեն ներառված ՍՊԸ-ների տվյալները:

„Իջևանի ԲԿ,, ՓԲԸ-ի իֆեկցիոն բաժանմունքի նախկին շենքում առաջիկայում նախատեսվում է ստեղծել հեմոդիալիզի բաժանմունք, որպեսզի Իջևանի տարածաշրջանի հիվանդները դիալիզի պրոցեդուրան ստանան տեղում:

Չինաստանի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետությանը նվիրեաբերվել են ռեանիմոբիլներ և շտապ օգնության գծային մեքենաներ, որոնցից 3 ռեանիմոբիլ և 6 գծային շտապ օգնության մեքենա տրամադրվելու է ՀՀ Տավուշի մարզի 4 ԲԿ-ներին: Դա կլուծի շտապ օգնության մեքենաների պակասի խնդիրը և կնպաստի կանչերի կատարման որակի բարձրացմանը:

Ավարտելով իր զեկույցը Ռ.Տիգրանյանը նշեց, որ առաջիկայում նախատեսված է իրականացնել մարզի բուժփմնարկների օպտիմալացում:

9.Մարզում լուծում պահանջվող աշխատանքների ընթացքի մասին

Ձեկուցող՝ Մ. Մելքումյան ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի ժ/պ

Ձեկուցողը ներկայացրեց Տավուշի մարզում հրատապ լուծում պահանջող խնդիրների ցանկը /կցվում է տեղեկանքը/:

Առաջարկվեց.

Համայնքների ղեկավարներին.

Մանրամասն ուսումնասիրել հրատապ լուծում պահանջող հարցերը և ներկայացնել առաջարկություն:

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Մ.Ղալումյանին.

ԶՕԸ-երի ոռոգման ջրի արդյունքները ներկայացնել մարզպետին:

9/7/2018

X 

ՄԱՐԶՊԵՏ

Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

